Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշտարակ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն իրականացնելու, գործընթացի կառավարման հանձնաժողովի՝ աշխատանքների մեկնարկի նիստի

ք. Աշտարակ **27.01.2025թ. ժամը 11:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Սամվել Սահակյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Անուշ Արամյան

Հանձնաժողովի անդամներ՝

Նվեր Մուրադյան, Արիս Թովմասյան, Կարապետ Առաքելյան, Նազելի Արսենյան, Ժաննա Ավետիսյան, Ռաֆայել Աղամալյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Անահիտ Համբարձումյան

Հանձնաժողովի աշխատանքների ադմինիստրատիվ և կազմակերպչական մասը, ինչպես նաև նիստերի արձանագրումն ապահովելու համար հանձնաժողովի քարտուղար է ընտրվել հանձնաժողովի անդամ **Անահիտ Համբարձումյանը:**

Աշտարակ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն իրականացնելու նպատակով գործընթացի կառավարման հանձնաժողովն աշխատանքները մեկնարկեց 2025 թվականի հունվարի 27-ին, ժամը 11:00-ին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Սամվել Սահակյանը: Նիստի սկզբում նա հանձնաժողովի անդամներին մանրամասն ներկայացրեց 2024 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև կառուցած խաղահրապարակների և ֆուտբոլի խաղադաշտերի լուսանկարները:

Սամվել Սահակյանը հանձնաժողովի անդամներին ծանոթացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 20-ի թիվ 163-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի աշխատակարգին, մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցին, առաջարկների հայտի, յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվությունների ձևաթղթերին:

Ելույթներով հանդես եկան, իրենց գոհունակությունը հայտնեցին և առաջիկա անելիքների մասին քննարկումներ իրականացրեցին հանձնաժողովի բոլոր անդամները:

Նիստի ավարտին հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ժամանակացույցով հաստատված՝ բնակչության իրազեկման փուլի ժամկետները և հայտարարեց աշխատանքների մեկնարկը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Սամվել Սահակյան**

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ _____ **Անուշ Արամյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Նվեր Մուրադյան**

_____ **Արիս Թովմասյան**

_____ **Կարապետ Առաքելյան**

_____ **Ժաննա Ավետիսյան**

_____ **Նազելի Արսենյան**

_____ **Ռաֆայել Աղամալյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Անահիտ Համբարձումյան**